Իրրեւ պատասխան իրենց այդ խնդրանքին Միլարայբան հաճեց յայտնել իրենց հետեւեալ երգը.—

Վարպետիս, Տիրոջ, ես մատուցո՛ւմ եմ աղօթքներս:
Գիտէ՞ք դուք, թէ՞ չգիտէք այս վայրերի առաւելութիւնները:

Եթէ դուք չգիտէք այս վայրերի առաւելութիւնները,
Այն ժամանակ ես կը պատմեմ.— Ահա Կեսպ-պոպ Նամ-կաճօնի անապատը.
Երկնային այդ ամրոցի պալատի վերը
Հարաւի կապտաւուն ամպերն են ժողովում.

Վարը՝ դեռ եւ կապոյտ առուակներ են վազում.
Ետեւը, կարմիր ժայռ է՝ երկնային տարածութիւնը,
Իսկ առջեւը՝ փռուած է գոյնզգոյն ծաղիկների կարպետ:

Տեսէք նաեւ —
Ծայրերից, վայրենի դաղանների ոռնոց է լսւում,
Աչ ու ձախ, ահաւոր, թագաւորական թռչուններ են սուրում,
Երկնքի մէջ թիթեռնիկները վայր են ընկնում մանր անձրեւի նման,
Եւ մեղուները անդադար երգ են երգում:
Այդ ամէնը ես տեսնում եմ:

Անապատ չէ: Ես տեսնում եմ ամէն ինչ:
Որովհետեւ այստեղ
Ժամանակի ձայներն են՝ սրտի բարեկամները:
Ու միտքը, ինչպէ՞ս կարող է միտքը ըմբռնել այս վայրերի զօրութիւնը:
Եթէ երգը ուրախ սրտից չբխի,
Եւ խմաստութիւնը չրթունքների ծայրին չվառուի:

Հեռաւոր ափից, խուլօրէն հծծող, հովի մի հոսանք խաղում է ջուրի պսպղումի հետ եւ մաղերս աչքերիս վրայ մանր ածում:

Սրտիս մէջ, Միլարայբան, անծանօթ եւ միամիտ շեշտով երգում է, ու ճեղքուած աչքերով, այծի ճերմակ մօրուքով, ցնցոտիների տակ դողահար նիհար մարմնով այդ հեռաւոր պատկերը, այս վայրկեանիս, այնքա՞ն ինձ մտերիմ է եւ ա՞յնքան հասկանալի:

«Որովհետեւ այստեղ
Ժամանակի ձայներն են՝ սրտի բարեկամները»:

Սեւա՛ն, Սեւա՛ն...

* * *

Կղզի դնալու համար — պատմում են — ուխտաւորները կանգ են առնում ափին, ձեռքերը խողովակի նման բոլորում բերանի շուրջը եւ պոռում: Մի ժամ յետոյ, երբ կատաղի խուլոցները ժայռերին են կպչում, կղզու առաղաստանաւը սկսում է դանդաղօրէն շարժուել եւ դալիս է հիւրերը փոխադրելու համար:

Նաւը, որ մեզ պիտի տանի Նոր-Բայազետ, դեռ չի եկել, ուստի ժամանակ ունենք այցելել կղզին: Բայց իրրեւ առանձնաշնորհեալ անձնաւորութիւններ մենք հնաղարեան առաղաստներով չենք դնայ, այլ մօթորով օժտուած նաւակով: Ճիշդ ասած, փոքրիկ մակոյկը, որ մեզ պիտի տանի, շատ էլ ապահով չի երեւում. հին, մաշուած, խարխուլ, ձրկնորսի մի մակոյկ է, որի եռեւի կողմում յարմարացրել են ահագին աղմուկ անող փոքրիկ մի մեքենայ: Երբ մի քանի հոգի նստում ենք մէջը՝ պտուտակը զօռ է տալիս, թմբթմբում, պայթոցներ արձակում, ծխում, ջղաղրգիռ կնոջ նման ցատկռտում ու տեղից չի շարժւում: Ճամբորդները նայում են առանց վրստահութեան՝ բերանը բաց, թթու ժպիտով:

— Բենզինը քի՞չ ա, ի՞նչ ա...

— Չէ՛, դատն ա... դա՛տ է եղել...

— Դէ եթէ դատն ա, դա՛տ արէք է՛...

Վերջապէս «դատ են անում» եւ մեկնում ենք:

Ճամբու խօսակցութիւններից երեւում է, որ այդ ժամն մօթորի ներկայութիւնը մի տեսակ խորհրդանշանական բնոյթ ունի: Այնտեղ, կղզին է, վանքը, «հին դարը», «իր մեռած մտայնութիւններով», իր վարդապետներով եւ առաղաստանաւերով, իսկ այստեղ, ահաւասիկ գիտութիւնը, առաջադիմութիւնը եւ լոյսը, լո՛յսը: Այդ խեղճուկ, Եւրոպայի ամէն մի խոնարհ պաշտօնեային մատչելի մեքենան, այստեղ մեծ անձնաւորութիւն է, առան-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան